



ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն ԵՒ Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

36 ՊՆ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ 12 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1887

ԹԻԻ 3889

ՄԱՐԿԱՆԻՆԻՆԻ կը հրատարակուի ի Կ. Պոլիս, ամեն շաբաթ օր, եւ ձեռքէ կը ծախուի 40 ՓԱՐԱՅԻ: Բաժանորդագրութեան պայմանք են՝ Կ. Պոլսոյ համար տարեկան կէս եւ վեցամսեայ՝ քառորդ Օսմ. ոսկի. գաւառաց համար 70 դրշ. եւ օտար երկրաց համար 15 ֆր. րանք: Բաժանորդագրութեանը դրկելու է առ մատակարարութիւն Սրեկելքի եւ Մասիսի, Կ. Պոլիս, Ղալաթիա, Նորատունկեան խան:

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Ազգային Տեսութիւն. Ազգային գործեր եւ ընտրութիւն Բաղաքական Ժողովոյ. Ընկերային ինքերներ. Յրանապան ցեղին նուազումը (Լ. ԻԿԻՈՆԷ): Տեղադրական. Հաճըն. (Ս. Թ. ԹԵՐԶԵԱՆ): Փիլիսոփայութիւն սիրոյ (Ն. մանողարար). Քերթուած. (Յ. Թ. ԳԱՅԱՆԱՆ): Բնագիտութիւն եւ Կ. Պոլիս. Մեծն վասիլ. Հայկազն. (Պ. Տ.): Վէպ. Հայաստանի բարբեր. Սիսակ եւ Սոսուն, Բընութեան սոխակներ. (Ղ. Պ. ՆԱԶԱՊԵՏԵԱՆ): Քաղաքացիական շարժական Լոյս. Բոտաբին, Ներքին, Ազգային:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՈՒՐԲԱԹ 11 ՍԵՊՏԵՄԲԵՐ

Ա.Զ.Գ.Ա.Յ.Ի.Ն ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ա.Զ.Գ.Ա.Յ.Ի.Ն ԳՈՐԾԵՐ

ԵՒ

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՂՈՅ

Դժգոհ ենք ազգային գործոց վիճակէն. կրօնական հարցեր եւ խնդիրներ կան վարչական սեղանին վրայ եւ չունինք տակաւին Բաղաքական Ժողով կարծէք թէ Ատենապետաց Դիւան եւ Երեսփոխանութիւն մասնաւորապէս ձեռք ձեռքի տուած են ազգային գործոց մնասելու համար. թէեւ մին եւ միւսը կ'աշխատին եւ աշխատած են լաւ գործելու, բայց այդ աշխատութեանց ընդհանուր արդիւնքը սա եղած է որ այսօր հակառակ իրենց բաղձանաց, ազգային գործերը կը գլուխ տարտամ, անորոշ եւ մնասալար շաւղի մը մէջ:

Վարչութեան նախորդ Բաղաքական Ժողովն Ազգ. Ժողովոյ Գ. նստին կը բերէր իւր համարատուութիւնն եւ այսպիսով հրաժեշտ կուտար իւր պաշ-

տօնէն: Ազգ. Ժողովն՝ համաձայն Սահմանադրութեան դադարեալ նկատելով զայն, կը յանձնարարէր իւր Ատենապետաց Դիւանին որ ընտրելէաց երկպառակ ցանկ մը պատրաստէ եւ կը խնդրէր Նուրեան էֆէնտիի Վարչութեանն որ շարունակէ իւր պաշտօնը մինչեւ իւր յաջորդին ընտրութիւնը:

Ատենապետաց Դիւանը, փոխանակ ըստ որոշման Ազգ. Ժողովոյ երկպառակ ցանկն անմիջապէս պատրաստելու ինչպէս որ իւր պարտքն էր, կը մանայ կարգ մը նկատուածներու մէջ եւ այսպիսով ամենէն աւելի կ'երկարէ ցանկին պատրաստութեան եւ ներկայացման գործողութիւնն որով թերութեան առաջին օրինակը կուտայ մեզ:

Այս միջոցին Նուրեան էֆէնտիի Վարչութիւնն, որոյ պաշտօնավարութեանն գլխին մնալու պատճառ մը չունինք եւ ընդ հակառակն կրնանք ըսել թէ խղճի մտօք կատարած է իւր պաշտօնն եւ եղած է բանիմաց եւ ազդեցիկ Վարչութիւն մը, փոխանակ ըստ տուալնոյն վարելու իւր պաշտօնը, կը թերանայ նորա մէջ եւ կը ձգէ ազգային գործերն երեսի վրայ եւ այսպիսով տեղի կուտայ մեզ ցաւելու իւր այս ընթացքին վրայ. Նուրեան էֆէնտի եւ իւր ընկերք լաւ գիտեն վարչական սա օրէնքը թէ նոր վարչութիւն մը չեկած հինը չէ կարող պաշտօնէն հեռանալ. երբ Նուրեան էֆէնտի յայտարարած է յատենի Ընդհանուր Ժողովոյ թէ այլ եւս վարչական աթոռներու վրայ գործ չունին, կարծած է թէ այս յայտարարութիւնն բաւական է զինքն իրաց վիճակին պատասխանատուութեանն զերծ պահելու: Այս յօդուածը գրելու թերեւս չձեռնարկէինք, եթէ նախորդ Վարչութիւնն ըստ առաջնոյն վարած ըլլար իւր պաշտօնն:

Ահա բաղում շարաթներէ ի վեր է որ Ատենապետաց Դիւանի պատրաստած ցանկն Ազգային Ժողովոյ ներկայացած է եւ տակաւին չէ ընտրւած Բաղաքական Ժողովն: Ազգին այս բարձրագոյն Ժողովն, որոյ պարտականութիւնն է հսկել ազգային մեծագոյն շահունց վրայ՝ անտարբեր իրաց վիճակին, կարծես թէ ինքն ալ քաջալերեալ եղած թերութիւններէ որոց վրայ պարտ էր իւր դժգոհութիւնն յայտնել, փափաքած է իւր բաժինն յաւելուլ այս թերութեանց վրայ, երկարե-

լով այսպէս Բաղաքական Ժողովոյ ընտրութիւնը, մերթ դիտողութիւններ ընելով պատրաստուած ցանկին վրայ, մերթ մեծամասնութիւն չգոյացնելով եւ մերթ իւր անդամներէն մի մասը չեղօք մնալով ընտրական գործողութեանց մէջ:

Արդարեւ ողբալի վիճակ: Այս նկատողութիւնը մեզ կը բերեն կը հասցնեն սա եղբակացութեանց. 1. թէ մեր Բաղաքական Ժողովոյ ընտրական եղանակը թերի է, եւ թէ պէտք է մինչեւ յաջորդ ընտրութիւն աշխատիլ բարեփոխել Սահմանադրութեան այդ կէտն եւ սահմանել այնպիսի եղանակ մը որ համաձայն ըլլայ ժամանակիս ոգւոյն. չէ կարելի գլուխէն սահմանադրական ազգաց մէջ ասկէ աւելի երկայն ձեւակերպութիւն ունեցող եղանակ մը. 2. թէ մեր Ազգ. Երեսփոխանութիւնը պէտք ունի փոխուելու, նոր անձեր պէտք են այլ եւս այս Ժողովին, որպէս զի կենդանութիւն մոռնայ ազգային գործոց մէջ, մեր արդի Երեսփոխանաց շատեր անտարբեր են եւ անգիտակից ժամանակիս պահանջման:

ՄԱՀ ՀԱՅԱԳԷՏ ՏՐ. ՀԱՆՈՒՇԻ

Աւստրիոյ ուսումնական աշխարհը Յուլիս ամսոյն մէջ ծանր կորուստ մ'ունեցաւ: Փիլիսոփայական կաճառին լեզուագիտութեան ճիւղին յուսալից եւ մեծ ապագայ ունեցող անդամներէն մին Տր. Յովհաննէս Հանուշ Յուլիսի 28ին յանկարծական կաթուածէ ըմբռնեալ Փարիզ իւր մահկանացուն ծաղիկ հասակի մէջ կը կնքէ: Այս լուրը յիշաւի սասանեցուց Աւստրիոյ ուսումնական աշխարհն, իւր ամէն ծանօթներն եւ զինքն իբրեւ հանձարեղ երիտասարդ գիտնական յարգողները: Աստիք որ վեց ամիս յառաջ իրեն սիրալիր Երթաս բարեւա մը մաղթած եւ զինքը քաջալերած էին իւր ուսումնական ճանապարհորդութիւնն յաջող եւ արդիւնաւոր ի գլուխ հանել, այժմ այս անակնկալ եւ անհաւատալի գոյժը լսելով՝ ցաւագին սրտիւ Զհանգիստ յաւիտենական մ'իրեն կ'ըսեն:

Տր. Հանուշ այս տարի Փետրուարի ըսկիւրը Վիեննայէն ոչ չառողջ ճամբայ ելաւ ուսումնական ճանապարհորդութիւն մ'ընելու, որուն ծախքը պիտի տար արժանաւոր լեհացի գիտնականաց ձեռնտու ազգային ընկերութիւնն ի Բրաքաւ: Այս նպատին ի մասնաւորի արժանացաւ Տր. Հանուշ իւր բաղմամբ լեզուաբանական հատուածներովն եւ «Լեզու Լեհացոյց» երկասիրութեամբն: (Հանգէս Ս. Բեայ)

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑԵՂԸ

Տիկին տը Սեւալ օր մը կը հարցնէր առ Նարոնէն Ա թէ լատ իւր կարծեաց ով էր ամենէն կատարեալ կինը: Վայսրը պատասխանեց. «Այն կինն որ ամենէն շատ զաւակ ունի»: Մոլիէն արդէն յայտնած էր այդ կարծիքն: Ի նկատ անորով թէ ինչ մօտաւորապէս մը ենթարկուած ենք՝ Ֆրանսայի ժողովրդեան դոյզն անման պատճառաւ, անշուշտ մենք ալ պիտի ստիպուինք խորհիլ թէ ամենէն արժանաւոր հայրենասէրը նա է՝ թերեւս որ ամենէն շատ զաւակ ունի:

Ոմանց համար հայրենասիրութեան ճգնաց գերագոյն նպատակն է ետ առնուլ մեր կորուսեալ զաւառներն եւ վերջապէս ձեռք բերել մեր զինուորական գերիշխանութիւնը ցամաքին վրայ: Այլ կը կարծեն թէ աւելի ստիպողական հարկ մ'է ազատել զմեզ Անգլիոյ ծովային, առեւտրական եւ գաղթային մենաշնորհէն: Վերջապէս ոմանք կը խորհին թէ ոչ մէկ բան կրնայ փոխարինել ազատութեան կորուստն եւ թէ մեր փորձած ցամաքի կամ ծովու վրայ ամեն ձեռնարկներու հետեւանքը պիտի լինի միահեծան տէր մը տալ մեզ:

Ըստ մեզ, որ կը դիտենք մեր երկրին մեծութեան բոլոր կողմերն, որ կ'աշխատինք բարձրացնել զնա առաջին կարգն, առանց վտանգի ենթարկելու ամենէն մեծ ստացուածքն՝ որ ազատութիւնն է, կը կարծենք թէ այդ իտէպիկն հասնելու լաւագոյն միջոցն է անվախճան կերպիւ աճեցնել մեր ցեղը: Վաղանցիկ յաջողութիւն մը արգելք չլինի որ քանի մը տարի յետոյ չկորսնցնենք մեր բոլոր առաւելութիւններն, եթէ վիճակագիրը շարունակեն տալեւս պարզ ինքններ տալ:

Արդարեւ, կը տեսնենք որ ի Գերմանիա, 1884ին, ժողովրդեան անուսն էր 495,697: Միեւնոյն տարին, յԱւստրիա՝ ծնեալք մեռեալներէն 425,000 աւելի էին, յԱնգլիա՝ 376,000 աւելի, յԻտալիա՝ 325,000: Ֆրանսան Ռուսիայէն ետքը կուգայ Մինչդեռ այս երկրին բնակիչներն 87,000 աւելցած էին, Ֆրանսայի բնակչաց թիւն աճած էր միայն 78,000: Ստուգիւ սոսկալի է այս:

Քսան տարիէն, եթէ այսպէս շարունակէ, Գերմանիա տասն միլիոն բնակիչ աւելի պիտի ունենայ, մինչդեռ մենք մէկ ու կէս միլիոն միայն: Մէկ կողմ թողլով Ռուսիա եւ Թուրքիա, որոց համար ճշգրիտ վիճակագիր չկան, եւ որք մեծ մասամբ ասիական պետութիւններ են, չորրորդ կարգը միայն պիտի բռնենք, հազիւ հազ պիտի գերազանցենք իտալիան, որ ընդհուպ մեզէն յառաջ պիտի անցնի: Կարելի չէ որ դեռ կոյր մնանք:

Երկրակալութիւնը նշանակութիւն մը չունի, բաղդատմամբ ժողովրդեան անման: Բոլոնիա, որ մեռած է իբր աղք, զարմանալի կերպիւ կը յառաջդիմէ իբր ցեղ: Գերմանիա վտանգ մը կը նկատէ զնա եւ եթէ Եւրոպայէն անհետանար, դարձեալ պիտի ապրէր ի Սիպերիա, ուր նշանաւոր զարգացում մը կ'ունենայ: Իռլանտա, որոյ ժողովուրդը սարսափելի կերպիւ նուազած է յԵւրոպա, կը վերածնի յԱմերիկա: Եթէ Անգլիա կորնչի իւր կղզոյն մէջ, պիտի ապրի յԱւստրալիա: Վերջապէս աչքի գարնող օրինակ մը չէ՝ հրեայ ժողովուրդն որ հայրենիք մ'ունեցած ատենն երբէք այնքան հզոր եղած չէ՝ որքան արդի

ժամանակներս, ուր գերիշխան դիրք մը զբաւած է Եւրոպիոյ բոլոր պետութեանց մէջ:

Ուստի մեր ջանքերը պարտին լինիլ ամեն միջոցներով աճեցնել մեր մարդկային զբաղակցութիւնը: Ամենէն շոյտ միջոցներն են կարելի եղածին չափ շատ օտարազգի եւ քնիկ ֆրանսացիներ Ամերիկէի հիւսիսարեւմտէն: Եթէ Ֆրանսա իրեն յատուկ ոգին ունի եւ իւր քաղաքակրթութիւնն տիեզերական եղած է, պատճառն այն է որ մեր ազգութիւն շոյտը թաղադրութիւն մ'է բաղմամբ ցեղերու որոց իւրաքանչիւրն իւր առանձնայատկութիւնը տուած է մեզ: Եթէ ժողովրդեան հիմը կեղտական է, յուսնական, լատինական, գերմանական, նորմանական եւ ասիական խառնուրդներ ունեցած ենք: Այս վերջին տարրն ամենէն աւելի մեր ձեռքին տակն է եւ երբ ուղեք՝ կրնանք Ֆրանսայի տալ հինգ միլիոն խլամ քաղաքացի: Այս ամենէն շոյտն եւ զիւրինն է:

Նմանապէս պարտինք ուսումնասիրել ժողովրդեան նուազման պատճառները մեր մէջ: Բազմաթիւ են այդ պատճառները, — չափազանց բարեկեցութիւնն, յաջորդութեանց դուրս իւնը, հողին կտոր կտոր բաժնուիլը, գեղջութեան եւ շուայտութեան յառաջդիմութիւնը մեծ քաղաքացի մէջ, ամուսնի անձանց շնորհուած ամեն կերպ առաւելութիւնները, սննդեան նիւթոց անպատկառ խորդախումը, կեղծ պերճանաց ճաշակն որ մեզ կը վախճնէ ծաղրելի լինելն եւ համեստ ապրիլը:

Պէտք է որ ճողովորինք հաճոյքի և նենգութեան մարդոց ջլատիչ լուծէն, բուժինք այն ահաբեկ հիւանդութենէն որ կը կոչուի թշուառութեան երկիւղը, քաջալերենք այն լաւ մարդիկն որք երիտասարդ կ'ամուսնանան եւ վերջապէս փոխանակ պատուելու ճարպիկ եաստէրներն, փառաւորենք այն մարդիկն որք անձնազուրկ կը լինին երկրին համար: Եթէ հաստատուի որ գաղթականութիւնը կը նպաստէ մեր ցեղին զարգացման, եթէ ապացուցուի որ խառնուրդներն անհրաժեշտ են, պէտք էր դիւրացնել զայն:

Ամենէն արժանաւոր հայրենասէրը նա՛ պիտի լինի որ գտնէ Ֆրանսայի ժողովրդեան նուազման դարմանն, որ ապահովէ մեր անդորրութիւնն ոչ միայն ներային՝ այլ եւ ապագային մէջ, որ փտահեցնէ զգեց թէ մեր ցեղը սահմանուած չէ՝ կորսուելու եւ իբր ապացուցեալ ճշմարտութիւն մը հաւատացնէ մեզ Միշէլի մեծ խօսքը. «Ոչ մէկ ժողովրդեան ոգին կրնայ կորսուիլ»:

Լ. ԻԿԿՈՆԵ
(Լ. Ֆրանս)

ՀԱՃԸՆ

Հաճըն հիմնուած է շորս շրթայակապ լեբանց մէջ, ունի 4000 տուն բնակիչ որոյ 50-60ը տաճիկ, մնացածն հայ, այսինքն 12-15 տուն կաթոլիկ: 70-80 տուն բողոքական եւ մնացորդը լուսաւորչական:

Գործք քաղաք. — Դիրքը լեռնային ըլլալուն գրեթէ բնակչաց մեծամասնութիւնը կը պանդխտէ դէպ յԱտանա՝ ուր կը կենայ վեց ամսոյ չափ, յետոյ կը վերադառնայ ու Եսլա՝ կոչուած գիւղերը կ'երթայ, այսպիսով իւր ապրուստը կը ճարէ խիստ քիչ ժամանակ իւր ընտանեաց քով մնալով: Փոք-

բամանութիւնը կը մնայ քաղաքն. ստոնցմէ ոմանք վաճառական են քիչ զբաղակցութեամբ, ոմանք ալ արհեստաւոր. արհեստը կը բաղկանան մեծաւ մասամբ կոշիկարուսթեք, երկրագործութեան եւ անագագործութեան: Ոմանք եւս հողագործութեամբ կը պարապին: Ատանայի հանրածանօթ վիճակն Հաճնոյ ալ մեծամեծ վտանգներ կ'ըստացունայ. այս տարի յԱտանա պանդխտող Հաճնցիք ձեռնուհայն վերադարձան: Ատանայի շատ բնակիչք ի Հաճըն կը գաղթեն եւ զանի եւս իրենց վիճակակից կ'ընեն:

Լեզու. — Կիլիկիոյ մէջ Հաճնցիք եւ Ուլիցիցիք հայերէն կը խօսին՝ որ աղաւաղեալ է. վերջնոյն Ուլիցի կամ Չէյթուլն անուն դիրքէն ծանօթ է ընթերցողաց: Իսկ Հաճնոյնը սա հետեւեալներէն կրնայ հասկնացուիլ, որ սովորաբար ք ո ի փոխուած է, Աստուած — Աստուօժ, բան — բօն, հաց — հօց, խրատ — խրօտ, բան մը պիտի ըսեմ — բօն մը պ'օսեմ, ուր կ'երթա՞մ — ետուր կալթօս, ինչպէս ե՞ս — ընչօց ես եւ. այսու ամենայնիւ դպրոցականք լաւ եւ զուտ աշխարհաբար կը խօսին. եւ կը ճգնին իրենց ծնողաց եւս ուսուցանելու:

Եկեղեցի. — Լուսաւորչականք ունին 3 եկեղեցի եւ մի վանք, որ կառուցուած է քաղաքին դիմացը. մէն մի եկեղեցի ունի 8-10 քահանայ՝ որ ժողովրդոց նուէրներով իրենց ապրուստը կը ճարեն. առաջնորդն է Գեր. Յովհաննէս Եպիսկոպոս Գաղանձեան, գիտուն, խոհեմ եւ գործունեայ անձ մը՝ որ կարողացած է ժողովրդոց համակրութիւնը չահիլ թէեւ Պատրիարքարանի գլխուած, սակայն տակաւին Ֆերմանը դրոյած չէ. բողոքականք ունին մի նորակառոյց եկեղեցի, կաթոլիկք եկեղեցի չունին եւ մի տան մէջ կը կատարեն իրենց եկեղեցական արարողութիւնը:

Վարժարան. — Երեք եկեղեցեաց կից կայ երեք աղք. վարժարան՝ որոց մէջ կ'ուսանին 600է աւելի աշակերտ. սոցա վիճակ խիստ անկանոն է, մէն մին կը կառավարուի մի վարժապետէ՝ որ հեզարան, սաղմոս եւ ժամագրքէ զատ ոչինչ գիտէ, վարժարանք բոլորովին տողջապահութեան հակառակ են, Ուսումնական Խորհուրդ չկայ. այս մասին ուրիշ անդամ ընդ արձակ գրել կը փափաքեմ, այժմ ուսմանը կը յաւելում որ եթէ այս ընթացք մի քանի տարի եւս շարունակէ, Հաճնոյ համար մեծ կորուստ պիտի ըլլայ, առ այս. Կեղր. Ուսումն. Խորհուրդոյ ուշադրութիւնը կը հրաւիրեմ Հաճնոյ կրթական սոյն ցաւալի վիճակը բարեփոխող Միացեալ Ընկերութեանց երկսեռ վարժարանն է, ուր կը դաստիարակուին 150ի չափ ուսանողք: Տնօրէն զաստուծ է Մելքոն էֆ. Մանուկեան նախկին աշակերտ Դահազարեան վարժարանի, եւ օգնական դասատուք են Մինաս էֆ. Թուրսարգիսեան եւ Միհրան էֆ. Գայեան, իսկ օրիորդաց վարժարանն ունի Օր. Աննիւ Երիցեան անունով Պոլսեցի վարժուհի մը: Միացեալ Ընկերութիւնը երկար տարիներէ ի վեր կը կառավարեն այս վարժարանները ձրիապէս եւ Հաճնոյ ներկայ երիտասարդութիւնն իւր կացութիւնն յիշեալ ընկերութեան կը պարտի: Ընկերութիւնն այս տարի Հաճնցիներէն 50 օսմ. ոսկի կը պահանջէ, սակայն ժողովուրդն աղքատ լինելուն հազիւ պիտի կրնայ 50 ոսկի վճարել: Ամսոյս սկիզբը քննիչ յանձնախումբ մը միջոցաւ տեղի ունեցան այս վարժարանաց տարեկան հարցաքննութիւնք եւ կիրաւի օրն ալ հանդէսն՝ որ խիստ չքեղ կերպով

յիքախոս անուն Արշակունեաց ցեղին պատկանող հայ մը Ադրիանուպոլէսէն եկաւ Կ. Պոլիս մասնաւոր գործի համար եւ այդ տեղ պատահելով Լեւոն անուն Տարօնեցի հայ իշխանի մը, սկսաւ բնակիլ նորա տան մէջ։ Մայիքտիս շատ սիրելի եղաւ հայկազն իշխանին իւր համեստ եւ քաղցր բնավորութեամբ։ Մինչեւ այն աստիճան որ Լեւոն իւր աղջիկներէն մին տուաւ նմա ի կնուծիւն։ Քիչ ժամանակէն Մայիքտիս ունեցաւ մի արու գաւակ եւ անունը դրաւ Կոստանդին։ Երբ սա բաւական մեծցաւ, դնաց Ադրիանուպոլիս եւ ամուսնացաւ այրի կնոջ մը պարկեշտ աղջկան հետ։ Սորա համար պատմագիրները կը գրեն թէ սերած էր Մեծն Կոստանդինոսի ցեղէն։ Աւասիկ այդ ցեղէն Կոստանդին Արշակունին ունեցաւ մի գաւակ, անունը դնելով Վասիլ որ կը նշանակէ թագաւոր։ Այսպէս ուրեմն Վասիլ հօր կողմէ Արշակունի է, մօր կողմէ Հոստայեցի, իսկ հանին կողմէ Տարօնեցի։ 812ին, երբ տակաւին մանուկ էր Վասիլ, Բուլղարաց Կրմոս թագաւորն ապստամբելով Միքայէլ Ռանգար կայսրէն, արշաւեց դէպ ի Ադրիանուպոլիս եւ գերեց բնակչաց մեծ մասն։ Այդ միջոցին Ադրիանուպոլսոյ մէջ կար հայկական ստուար գաղթականութիւն, որ ունէր իւր առանձին եպիսկոպոսը։ Կրմոսի գերած բնակիչներու կէս մասը գրեթէ հայեր էին, որոց մէջ կար Վասիլ իւր ծնողաց եւ ազգականաց հետ միասին։ Նմանապէս եւ Հայոց Մանուէլ եպիսկոպոսն։ Ըստ վկայութեան Պերփեռուսէն կայսեր, մինչեւ այդ ժամանակ տակաւին քրիստոնէութիւնը տարածուած չլինելով Բուլղարաց մէջ, Մանուէլ եպիսկոպոսն եւ միւս գերի վարուած հայերը քրիստոնէայ դարձուցին շատ բուլղարներ։ Ենթադրեալ այդ հայ առաքելներ, քրիստոնէութիւնն սկսաւ ծաւալիլ ի Բուլղարիա մինչեւ այն աստիճան, որ Կրմոսի յաջորդ Մոտրազ թագաւորն հալածանք հանելով քրիստոնէութեան դէմ նահատակեց Մանուէլ եպիսկոպոսն եւ ուրիշ բազմութիւն հայեր, որոցմէ շատերը մերձաւոր ազգական էին Վասիլին։ Որպէս կը վկայէ նոյն ինքն Պերփեռուսէն կայսր, ըսելով։ Որով եւ վիճակեցաւ բազմաց արեւակից ազգականաց Վասիլի զվկայականն առնուլ զյաղթանակ պարծանաց։ Ղի եւ սովիւ պերճասցի բարի անուն ազնուական տոհմի նորա։

* * *

Ադրիանուպոլսոյ հայ գաղթականութիւնն երկար ժամանակ չմնաց Բուլղարաց գերութեան տակ, որովհետեւ Լեւոն Արծրունի Բիւզանդիոյ հայկազն կայսրը բոլորովին խորտակելով նոցա ոյժը նուաճեց զայնս։ Եւ հրամայեց իրենց երկիրը դարձունել գերի տարուած հայերը։ սակայն նախապէս ամենն ալ իւր առաջ կանչելով սիրով խօսեցաւ նոցա հետ։ Բազմութեան մէջ նշմարելով Վասիլն, որ այն ժամանակ գեռ մանուկ էր կայտառ երեսով, կը հրաւիրէ իւր մօտ։ Վասիլ ծնրադրութեամբ եւ զուարթագին կը մօտենայ կայսեր եւ կը նստի նորա ծուռքերու վրայ։ Կը սիրէ եւ պարգեւներ կուտայ նմա։ Հայ գաղթականութիւնը շնորհիւ հայկազն կայսեր Ադրիանուպոլիս վերադառնալէ յետոյ, կը պատմեն թէ մի օր ցորենի հոռնձքի ժամանակ, երբ որ Վասիլ կը ննջէր որայնեւրու հովանոյն տակ, արծիւ մը թռելով եկաւ նորա մօտ եւ թեւերը բացաւ նորա

վրայ, կարծես ուզելով հովանաւորել զնա։ Մայրը տեսնելով այդ հեռուէն ճիշդէր կ'արձակէ եւ կուգայ կը վանէ թռչունը։ սակայն արծիւը վերստին կուգայ կը հովանաւորէ զնա եւ այս երեւոյթ գեռ մի քանի անգամ եւս կը կրկնուի ըստ վկայութեան Պերփեռուսէն կայսեր։ Պատահեալութեան հասակին մեռաւ Վասիլի հայրն եւ այնուհետեւ ինք միայն պարտաւոր էր հոգալ իւր եւ իւր մօր ապրուստն։ Ադրիանուպոլսոյ մէջ երկաթագործի մօտ աշակերտութիւն կ'ընէր չնչին ուսմանով, սակայն այդ ուսման ալ չէր ստանար կանոնաւորագէտ ուստի աշխոյժ պատանին, որ կ'ըզար թէ բնութիւնն աւելի մեծ կարողութիւններ տուած է իրեն, ազգաց իւր մօր թոյլ տալ Կ. Պոլիս երթալ բազմ որունեւր։ «Այնտեղ զիւրաւ պիտի կարողանամ քո եւ իմ ապրուստի պիտոյքն հայթայթել»։ սակայն մայրը չէր ուզեր բաժնուիլ իւր միակ միջոցաւորութեան։ Վերջապէս մի օր երազի մէջ տեսաւ որ մեծ ծառ մի բունեւրով իրմէ ծաղկաւէտ եւ պտղաւի բարձրացաւ բնակարանէն աւելի բարձր։ Եւ այդ ծառի բունն եւ շառաւիղներն ամբողջապէս ոսկի էին։ Մի ուրիշ երազ ալ տեսաւ տեսաւ։ Ծերունի մը, ոյր յերանէն կրակ կը ցոլանար, եւ այդ ծերունին մօտենալով իրեն ըսաւ։ Աստուած քո որդի Վասիլին պիտի տայ Բիւզանդիոյ կայսրութեան գաւազանն, այս պատճառաւ թոյլ տուր նմա երթալ Կ. Պոլիս։ Մայրն ուրախանալով այս երազի վրայ, հրաման տուաւ պատուիրելով միանգամայն առաքինի մնալ միշտ, որպէս զի աւելի եւս փառաւորութիւն իւր առջին բարի անունը Վասիլ երթալով Կ. Պոլիս, իրիկուան մը դէմ կը հասնի Ռէյ դրան մօտ եւ կը նստի Գիւմրիոյ վկայի մենաստանի դուռն ուր կը պարտաւորէր քնանալ։ մի և նոյն ժամանակ մտքով կը խորհէր մեծ իշխանի մը տան ծառայութեան մտնել՝ իշխանական ամեն տեսակ գործոց վարժուելու նպատակաւ։ Եւ մինչ այս քաղցր մտածմանց մէջ էր ըսնը վրայ հասաւ Այդ մի եւ նոյն վայրկենին Ս. Գիւմրիոյն երեք անգամ երազի մէջ կ'երեւի վանահօր եւ կ'ըսէ։ Վանքի դուռն ել եւ ձայն տուր Վասիլին եւ պատուարէ զնա, որովհետեւ նա ապագային պիտի լինի նոր Հռոմի միահեծան ինքնակալն եւ պիտի վերանորոգէ այս մենաստանն։ Այսպէս ալ ըրաւ վանհայրն եւ ապա իւր տեսիլը պատմեց Վասիլին։ Վասիլ բնականաբար ձիւղեցաւ միայն այդպիսի երազի մը վրայ որ կատարելապէս անհնարին կը թուէր իրեն եւ միայն ազգաց վանահօր որպէս զի իւր համար միջնորդ է երեւելի իշխանի մը ծառայութեան մէջ մտնել։ Վանհայրն իսկոյն կը միջնորդէ Թէոփիլոս մեծ պատրիկի մօտ որ Միքայէլ կայսեր եւ Վարդ կեսարի ազգական էր։ Թէոփիլոս կը սիրէր իւր ապարանքի մէջ պահել հսկայ եւ վայելչահասակ մարդիկ։ ուստի երբ տեսաւ զՎասիլ, որ ամեն բարեմասնութեամբ կատարեալ էր, ընդունեց իւր մօտ։ Էրբ պաշտօնեայ եւ ձիւրու հոգն յանձնեց նմա։ Մի օր Միքայէլ կայսեր բեռին եւ գահակիցն Վարդ կեսար մեծ խնջոյք տուին կայսերական պալատի մէջ, ուր ժողովուած էին պալատականներն եւ երեւելի իշխաններ յոյն եւ հայազգի։ Այդ էր նմանապէս Թէոփիլոս Վասիլի հետ։ Այնտեղ կար հսկայամարմին բուլղար մ'ոյր մասին զանազան առասպելական գովեստներ կը պատմէին եւ կ'ը-

սէին թէ իւր կենաց մէջ յաղթուած չէ մէկէ մը։ Վասիլ որ կեցած էր Թէոփիլոսի ետին, կրակ ու բոց կտրած էր եւ կը փափաքէր իւր ոյժը փորձել այդ վիթխարի հսկայի վրայ, մանաւանդ երբ կը տեսնէր որ յոյն իշխաններէն եւ ոչ մին ասպարէզ կը հրաւիրէր Թէոփիլոս առաջարկեց կեսարին որպէս զի հրաման տայ իւր առաջին մենամարտի ելնել անյաղթելի բուլղարի դէմ։ Մի եւ նոյն բանը կը կրկնէր եւ Կոստանդին երեւելի հայազգի պատրիկը, մանաւանդ գիտէր թէ Վասիլ հայ է եւ կ'ուզէր բոլոր հանդիսականաց առաջ ցոյց տալ հայ զինացունի գերազանցութիւնն։ Երբ ամենի գլուխն սկսաւ դառնալ զինոյ գլորչիներէն, Վարդ կեսար հրաման տուաւ մենամարտի եւ այն ժամանակ նոյն իսկ արահի մէջ իրարու հանդէպ ելան անյաղթելի բուլղարն եւ երիտասարդ հայկազնը։ Եւ մինչ բուլղարն յարձակելով Վասիլի վրայ կ'ուզէր կողքէն բռնելով վայր նետել, բաջարի հայկազնն ամրապէս բռնեց վիթխարի բուլղարն եւ գետին փռեց։ ապա իւր թեթեւ անօթ մը երկու ձեռքով բռնեց վեր բարձրացուց եւ վերստին գետինն դրաւ։ Այս մեծ յաղթութեան վրայ սքանչացան ամբողջ բուլղար մեծ ամեծներն եւ «այնուհետեւ, կը գրէ Պերփեռուսէն, Վասիլի համբաւն սկսաւ ծաւալիլ համայն քաղաքի մէջ եւ ամեն ոք նորա մասին կը խօսէր եւ կը հիանար նորա քաջութեան վրայ»։ Այնթիւ եւս Վասիլի նմանօրինակ քաջագործութիւններն, սակայն մի քանի գլխաւորները միայն յառաջ պիտի բերենք աստ։ Միքայէլ կայսրն ունէր խնայական եւ գեղեցիկ ձի մը, որուն թիչ մարդիկ կը համարձակէին մօտենալ, իսկ կատաղի ժամանակն՝ ոչ ոք։ Մի անգամ որսի գնացած ժամանակ կայսրը գաւազանով նապաստակ մը կը գտնէ եւ ձիէն կ'իջնէ նապաստակը բռնելու։ այդ միջոցին ձի կ'սկսի փախչիլ կատաղաբար։ ոչ ոք կը կարողանայ բռնել, մանաւանդ թէ արդէն ոչ ոք կը համարձակէր մօտենալ։ Սակայն Վասիլ վազելով երկվորի ետեւէն գառան պէս կը բռնէ զնա եւ վրան նստելով կը բերէ կայսեր։ Կայսրը կ'ըջանչառայ Վասիլի վրայ, եւ կուտայ նմա ձիու բոլոր զարդարանքն եւ կ'ըսէ Թէոփիլոսին։ «Այսպիսի մարդու մ'արժան է ինքնակալի սպասաւոր լինել, հետեւաբար Վասիլ իմն է եւ ոչ քոյն»։ Ապա իւր մօտ առնելով զՎասիլ ախտապետ նշանակեց եւ իւր որդւոյն նման կը սիրէր զնա։ Մի ուրիշ անգամ երբ բազմութեամբ որսի գնացած էր կայսրն, ահադին գալ մը դուռն ելաւ անտառէն։ ամենքն ալ զարհուրելի երկիւղի մէջ ընկան, միայն Վասիլ որ մէջքին կը կրէր կայսերական դաշլոյն, աներկիւղ յառաջացաւ դէպ ի ամենի դաշլն եւ սուրը շեշտակի իջեցնելով ձեռքեց նորա գլուխը։ Վարդ կեսար կայսեր բեռին եւ գահակիցը տեսնելով այս ըսաւ իւր մօտ եղովներուն։ «Ար տեսնեմ որ այս մարդու ձեռքով պիտի վերջանայ մեր ամբողջ ազգատոհմը»։

(Շարունակել)

Պ. Տ.

ՍԻՍԱԿ ԵՒ ՍՈՍՈՆԻ

ԲՆՈՒԹԵԱՆ ՍՈՒՍԱԿԱՆ
(ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐՔԵՐ)

Է.

Կէս օր էր եւ Սիսակի ու Սոսոնի Գառ-
ները՝ խոնջեալ ու վատաւարեկ մակաղ-
ած էին այն դրախտի չրջապատն՝ ուր
մարդերի եւ ծաղիկների առատութեան մէջ
նստած էին զէմ առ զէմ եւ շատ մօտ մէկ
մէկու, Սիսակ եւ Սոսոն։ Առաջին անգամ
Սիսակ կը փորձէ պատահել այն պատկառ-
նաց քողն՝ զոր համեստութեան կնիք մեր
հայ գեղջուկների զէմքին կը դրօշմէ։ Կը
բռնէ Սոսոնի փափուկ ձեռքէն ու կաս
կարմիր կտրած կ'ըսէ։

Գիտե՞ս, Սոսոն, սիրտս կրակ մը կայ
որ միշտ կը վառուի։ Հգիտեմ ինչ ընեմ որ
բիշ մը մեղմի։

Սոսոն. — Դուք միայն քո վիճակը գի-
տես, ինձմէ ալ տեղեկութիւն ունի՞ս թէ
ինչ կը քաշեմ։

Սիսակ. — Ինչ, միթէ դո՞ւ ալ իմ վիճակի
մէջ կը գտնուիս, խեղճ աղջիկ, ես կը կար-
ծէի թէ դու բոլորովին անտարբեր ես այս
մասին։ Այո՛, մասամբ երջանիկ կրնամ հա-
մարուիլ որ զքեզ գտայ իմ սրտին համա-
պատասխանող, բայց միւս կողմէ դժբախտ
եմ, գիտեմ որ մեծ խոչընդոտներ կան մեր
առջեւ՝ մեր ապագայ կատարեալ երջան-
կութեան համար։ Արեւմտ, կը խնդրեմ, իմ
սիրուն տատրակ, պատմէ՛ ինձ թէ ո՞ր օր-
ունէք զգացած ես դու քո մէջ այդ կրակի
աղբեցութիւնը։

Սոսոն. — Գոյն տալէ եւ առնլէ ետք
վարդի նման կարմրած կը խօսի։ «Անցեալ
մի քան մէջ՝ երբ մեր դրացի Մուրատի տունն
հարսնիք կար, հարսանեաց այն եռ ժամա-
նակին՝ որ դու եւ քո հասակակից երիտա-
սարդներն հազած էիք ձեր հարսանեաց
զգեստները, կապած էիք ձեր գլուխը զոյն
զգոյն մետաքսեայ ֆօշէներ ու եւոյճեր,
այնքան գեղեցիկ կը խաղայիք ու կ'երգէիք
հայերէն ու քորդերէն երգերն, այն օրէն
ի վեր գիտես թէ սրտիս տէրն եղաք։ Երբ
չտեսնէի զձեզ, արեւը մութ կ'երեւէր ինձ,
բայց իմ այս ցաւն ես միայն գիտէի, սրով
օրէ օր կը հալուէի ու ծնողքս երբ պատ-
ճառը կը հարցնէին, «գլխու ցաւ ունիմ»
կ'ըսէի։

Սիսակ որ իւր անփորձ հասակաւ կը
կարծէր թէ կիներն սկեպտիկներ են, ու
երբ նկատեց Սոսոնի վիճակը, լսեց այն
խօսքերն՝ որոյ անուշութիւնն իրեն համար
երբէք նմանը չունէր, ինք զինք կորսնցնողի
մը պէս՝ պահ մը լսեց. այն երկնային ժա-
մուն՝ երբ սրտեր միայն կը հասկնան իրա-
րու լեզուն, ո՞վ գիտէ, իւրաքանչէր թնդիւն-
ներ կը լսուէին այն մարմարեայ ձերմակ
լանջիլ ներքեւէն՝ որոց ստորեւը ժամացոյցի
մարագաշարժ ճոճանակի ձեւով սիրոյ ելեկ-
տրականութեամբ անդադար կը բաբախէին
այդ սուր սրտերը։ Սիսակի աջ կողմը դըր-
ուած էին երկու փունջ անուշահոտ ծա-
ղիկներ, իւր ձեռքը մեկնեց եւ վեր առաւ
փունջ մը թարմ ծաղիկ, սրտի բուռն սի-
րով մը Սոսոնի տունը զայն ըսելով. «Ըն-
դունէ՛ այս փունջ ծաղիկ, սիրելի Սոսոն, եւ
ծաղիկի նման մնացիր միշտ բաց եւ զը-
ւարթ որ հոտոտեմ քեզի»։

— Ծաղիկն ի բո արեւ, ըսաւ Սոսոն,

եւ ինչ պիտի անեմ այնպիսի ծաղիկներն
որոնք տի թափեն իւրեանց տերեւներն, իմ
ծաղիկը դուք էք։

Բնութեան այս հարազատ զաւակներն,
այսպէս ծաղիկի նման բացուած ծաղկով կը
փոխարինեն իրենց սրտից զգացումներն։
Ինչ պարզութիւն եւ խորհրդաւորութիւն։

Ը.

Օրն արդէն հասարակած էր ու Սիսակի
եւ Սոսոնի գառնուկներն իրենց յոգնու-
թիւնն եւ արեւի տաքութիւնն անցունէ-
էտք, լերանց չորս կողմէն փչող մեղմիկ
քամիներէն զգատանալով սաք կ'եննեն ու
ապրին անդին կը ցրուին արածելու։ Նկա-
տելով զայս Սիսակ եւ Սոսոն՝ կը փու-
թան հեռանալ այն տեղէն որ իրենց հա-
մար եղեմը կը համարուէր։ Մնա՛ք բար-
եաւների վերջին վանկերի հետ մէկ մէկի
այտերին կը հպին այն շրթունքն որ պասք-
եալ ու խոնջեալ ուղեւորի մը նման, պաղ
աղբերց դիմաց կը դուրսնայ։

Կը հեռանան այդ վայրկեանին այն սիրա-
զոյգ աղաւթներն. սակայն սրտերին հոն
է՛ ուր առաջին անգամ սիրաբանելու ա-
ռիթմն ունեցան, հոն, ուր իրենց անբիծ
սրտերը զեղլու միջոց գտան, հոն, ուր
մարդկային կեանքի համն առնելու նախա-
բանը կ'սկսին ու այդ վայրը՝ «փորձիկ դը-
րախտիկը» զոր կը կոչեն տեղացիք, կը լինի
նոցա յիշատակաց գլուխ գործոց։ Ամեն
անգամ երբ տեսնեն այդ վայրը, կը կեն-
դանանայ այն յիշատակն ու կ'արժարծի
բուռն կերպով նոյն կրակը։

Կանցնին այսպէս օրեր ու ամիսներ կը
հասարակի նաեւ մայիսն, եւ օր մ'այդ հիա-
նալի օրերէն շօգնէր բախտն այդ ան-
բախտից գտնել մէկգլուխ առանձին. ինչ-
պէս առաջին առթիւ ի մէջ դրախտիկին,
ա՛խով վախով կը գիտեն զիրար, երբեմն
աչքեր եւ ձեռքեր շարժումներով միայն
կը բաւականան։

Սիսակի հօր առնը լինելով բաւական
հեռի Սոսոնէնց տնէն՝ այս առթիւ Սիսակ
չատ դժբախտ կը համարէր զինքն, որ շատ
անգամ գէթ աչքի պարզ տեսութենէն
զուրկ կը մնար։ Ուստի, օր մը կը մտածէ
իւր սիրտն յայտնել իւր հոգեկից ընկեր Պ.
Պաղտասարին, որոնք թէ ազգականութեան
եւ թէ դրացութեան կողմէ մօտիկ յարա-
բերութիւն ունէին. Սոսոնի հօր եւ մօր
հետ ու այս պատճառաւ ալ Սոսոն անխը-
տիր վերջնոց տունն ելեւմուտ կ'ընէր։

Սիսակի ընկեր Պ. Պ. կաթողիկն կը սի-
րէր զինքն եւ ինչ առաջարկութիւնն որ լի-
նէր նորա կողմէն, ամենամեծ հաճոյքով
կ'աշխատէր գո՛չ ընելու իւր սիրելի ընկերն.
այս պատճառաւ մեծ հաւատք կը տածէր
Սիսակ իւր ընկերի աջակցութեան, ընկեր
մ'որ է՛ եւ քառերի տարբերութիւն չէր
դնէր իւր եւ Սիսակի միջեւ։ Եւ շատ ան-
գամ երբ կը տեսնէր զՍիսակ գունատ,
տխուր եւ թռչնած, արեգակն ճառա-
գայիներն ներքեւ խամրած ծաղիկի մը նը-
ման, անուշութեամբ կը մերձենար անոր,
եւ եթէ երբէք իւր տրամադրութեան ներ-
քեւ բան մ'ունենար նուէր տալու յարմար,
Սիսակին կուտար՝ կը պաղտաէր եւ կ'ստի-
պէր որ Սիսակ իւր այդ ցաւի կամ մտած-
ման պատճառը պարզէ. եւ սակայն հա-
մեստութիւնն եւ սովորութիւնը կը կապէին
նորա լեզուն եւ ինք Սիսակ՝ շատ զիշեր-
ներ մոմտութեն անքուն կը լուսնցնէր.
յաճախ Սոսոնի կենդանագիրն իւր երե-
ւակայութիւնը կը յախշտակէր, ու Հազար

ու մէկ գիշերների «Արթուր երազողի» վի-
ճակի մէջ կը գտնուէր։

Թ.

Ինչ որ բարեխառնութեան օրէնքէն եւ
աստիճանէն դուրս է, մեղք եւ վնաս է։
Այսպէս եւ նաեւ սիրոյ տրամադրութիւնը։
Եւ այս տրամադրութեանց օրէ օր սաստ-
կանալով ու Սիսակ իւր գաղտնիքը թա-
քուն՝ աղաւթ խոհեմութիւն համարելով,
ծանր հիւանդութեան մը կը դատապար-
տուի։ Աչքերը կը մթագնին, խեղքը կը
դառնայ, մէջքի եւ սրտի ցաւ մը կ'զգայ,
ախորժակը կը գոցուի ու յաճախ՝ շատ յա-
ճախ կը հազայ ու ամեն հազալուն մաղ-
ճախառն սեւ թուր մը թքամանի (կոշտ
խեցիկ) մէջ կը թքէր, որոյ հետ խառնուած
կը տեսնուէր կարմրագոյն տեսակ մը մաղձ,
զոր մերթ երկար կը դիտէր Սիսակ
ու կ'զգար որ այդ կարմիր մաղձն իւր
սրտի կրակի կիզիչ բոցերն էին. եթէ չհաս-
նէր նմա զովացուցիչ այն սիւժը զոր կը
չարժէր Սոսոնի սիրային ձայնի եւ մոգա-
կան լեզուի ճոճումներն, իւր բանը լնցած
էր ու գերեզման պիտի մնար իրեն միւս-
թարան։

Կանցնին քանի մ'օրեր, Սիսակի հիւան-
դութեան վրայ ու փոխանակ լաւանալու կը
վատթարանայ իւր առողջական վիճակը.
Սիսակի մայր Նարգիզ խաթուն, մօրու էր.
նա արդէն իւր Սաֆար անուն հալալ տղայի
չափ չէր սիրեր զայն, աւերելոյթ կ'արգա-
հատէր եւ ճշմարիտ մօր մ'անկեղծ սիրոյ
ձեւաբանութիւններով կը կեղծէր։ Դիտ-
մամբ Սիսակի անկողինը պատրաստուել տը-
ւած էր մի այնպիսի խոնաւ եւ մութ խոր-
շի մէջ՝ ուր կէս ժամու շափ ամենէն քա-
ջառող մէկն եթէ նստէր, առանց հիւան-
դութեան կարելի չէր դուրս ելնել։

Սիսակի դժբաղդութիւնը գիտես թէ
կատարեալ լինելու համար՝ ժամանակէն
կանուխ, իւր մայր Շուշանիկը, նոյն իսկ
իւր այդ սիրելի մանկիկն (Սիսակ) աշխարհ
բերելու ծննդաբերութենէն կը մեռնի։ Սի-
սակ որը կը մնայ եւ Պ. Մ. իւր գլխաց մէջ
կը սնուցանէ զայն, եւ իւր վերջին կին Տ.
Նարգիզ նկատելով Պ. Մ. ի առ Սիսակն ու-
նեցած կրկնակի համակրանաց եւ սիրոյ մե-
ծութիւնը, շատ մ'անհեթեթ մտածու-
մերով դառնացած էր նորա զէմ։ Սուր
համար ալ, Սիսակի այդ հիւանդութիւնն
իւր անգութ սրտին ներքեւ միսթարու-
թիւն պատճառած էր. եւ առանձնութեան
մէջ Պ. Մ. ի հետ կը խօսէր Սիսակի վերա-
բերումով շատ աննպաստ գաղափարներ կը
յայտնէր նորա մասին եւ միշտ կ'աշխատէր
ատելի ընել զայն իւր դրովագութ հօր
աչքին, բայց Պ. Մ. ժամանակ մ'անդըրդ-
ուելի՛ միշտ մի եւ նոյն մնաց իւր հայրական
սիրոյ մէջ. եւ եթէ երբեմն պաղ վարուե-
ցաւ իւր հոգեհատոր զաւկի կարեկցութեան
արժանի վիճակի նկատմամբ, այն եւս մեծ
յանցանք մը կարելի չէ վերագրել անուս
հօր մ'որ ենթակայ եղած էր վատասիրտ
կնոջ մ'անընդհատ համոզանաց։

Պ. Մ. ի ամեն օր քանի մ'անգամ այն
սեւատեսիլ բանտը կը մտնէր՝ ուր փախթի
կտորի մը վրայ փռուած էր քիչ մը կակուղ
խոտ, վրան պարզուած էր բրդէ չոր թա-
ղիք մը, եւ մէկ կողմը դրուած էր յարգով
ի շալէ կըր տապալկի ձեւ մի բարձ։ Այս
էր Սիսակի հիւանդութեան անկողինն, ա-
սոր վրայ նորափթիթ վարդենիի մը դաւ-
կահար ճիւղի նման փռուած էր Սիսակի
գէմը կարմրած քան այլայլած, աչքերը

բոլորած եւ կարծես թէ մի կորուստ որո-
նելու հետամտութեամբ՝ չորս կողմը կը յա-
ծէին՝ բայց ի զուր : Իրենց փնտռածը չէին
գտներ :

Անգամ մը Պ. Մ. ներս մտաւ Սիսակի
ննջարանէն, դիտեց որ իւր խեղճ աղեկը
հոգեկան մեծ տագնապի մը մէջ կը գլու-
նուէր : ասոր համար իւր սիրտ կրակ առաւ
ու մարդ զրկեց կանչելու գիւղի մէջ բժշ-
կութեան համբաւ հանող մի ծննդաւոր կին
որոյ կը կոչէին Քարվէզ հանուում :

Քարվէզ հանում անմիջապէս պատաս-
խանելով Պ. Մ. ի հրաւերին՝ առանց իւր
բժշկական գործիքներէն ու զեղերէն բան
մ'իւր հետն առնելու կը մտնէր Պ. Մ. ի
տունը գնալ, ներս կը մտնէ Սիսակի ննջա-
րանէն, ու պատրաստ եղողներին բարեւ
տալով հիւանդի անկողնոյ կողմը կ'երթայ :
Պ. Մ. կրօն իւր ծխաւոր ծխախոտով լիւր լը-
ցած, վրան մի բարկ կրակ դրած, այդ մութ
բանտի մէջ կողմը նստած այնպէս բարկու-
թեամբ եւ թախծանք կը ծխէ իւր զաւնը
(չըսուք) որ բերնէն դուրս տրուած մուխն
եւ գոլորշին ասես թէ իւր վերին աստի-
ճանի բարկացած եւ ցաւցած լինելու միտ-
քը կը յայտնէին : Պ. Մ. այս վիճակին մէջ
չնչմարեց Քարվէզ հանումի գալը : քանի մը
վայրկեան ոտքի վրայ կեցած մնաց նա, յե-
տոյ Պ. Մ. տեսաւ զինք ու ըսաւ : «բարձր
եկաք, Քարվէզ հանում, խնդրեմ նստեցէք
ու անգամ մը մեր Սիսակը նայեցէ՛ք տես-
նե՛ք թէ ինչ է նրա ցաւն, անոր ինչ դեղ
ու դարման պէտք է : » Այս խօսքերը Սիսակ
որոյ կը լսէր, ու ինքն իրեն կ'ըսէր : «Ես մի-
այն գիտեմ իմ ցաւի դարման, չգիտեմ որ
Քարվէզ հանումը վճուկի արհեստ գիտնայ,
թէ ոչ անկարելի է այս ցաւոցս դեղ գտ-
նայ : »

Քարվէզ հանում Սիսակի բարձի վերեւ
նստած՝ ձեռքը նոյա լուսնակածեւ ճակտին
դրաւ՝ զոր մտային ներքին տապ մը կրակ
ու բոց կտրած էր տաքութենէն : յետոյ
նորա լայն սիրտը շոշափեց որոյ ներքեւ
անծանօթ կը մնար բուն ցաւի արմատն :
ապա նորա վառվռուն աչքերին նայեցաւ՝
ու շատ մ'ինքն իրեն մտածելէ ետք, թէ եւ
որոյ բան մը չկրցաւ հասկնալ, բայց իւր
անունը չկտրեւելու համար սկսաւ ասել թէ
«չար նազար առած է, զիչեր տոտն խոնաւ
տեղէ անցած միջոցին մենէ աղէկները (դե-
ւեր) վրայ կոխած է, պէտք է գգուշ մը-
նաք եւ թող չտաք որ ինքն իրեն շատ զա-
ռանցէ, հետեւանք գէշ կ'ըլլայ : » Այսպիսի
ցաւերու դեղ եթէ լինի աղօթելն եւ թուղթ
ընելը կամ կապս կապելն է, ես որ առա-
ջինն եւ վերջինը գիտեմ, կը խոստանամ
ձեր որդին լաւցնել : Միայն թէ նե-
րեցէք ինձ քանի մը վայրկեանի համար տունս
երթալ, ու այդ արհեստներու վերաբեր-
եալ գործիքներն ու դեղերն առնելով գամ»

Շնորհակալ եմ, ըսաւ Պ. Մ. կրօն, ձեր
այդ բարիքն յաւիտեան չպիտի մոռնամ,
սիրելի Քարվէզ հանում, կ'աղաչեմ որ չգան-
դաղիք, շուտ դարձէ՛ք :

Քարվէզ հանումը գլխոյ թեթեւ շարժ-
մամբ մը մեկնեցաւ, բայց տարիքը զինք
այնքան մեղկացուցեր էին որ գիտես թէ
իւր զգեստները ծանր բեռան մը չափ յոգ-
նութիւն կուտային իրեն : արիւն քրտինք
մտած տուն գնաց, քրքրեց մեծ եռանդով
մ'իւր բժժանքներն՝ ինչպէս հեղինակ մ'իւր
երկին ամենասիրելի կտորները :

Քանի որ Քարվէզ հանումը զեռ վերա-
դարձած չէր, եւ Սիսակ արդէն լսած էր
այդ բժշկի դեղագրոյ պատրաստութիւնն,

իւր ցաւերը կը մոռնար փոքր ինչ եւ այդ
դարմանալի կատակերգութեան հետեւան-
քին կ'սպասէր : Արդարեւ այս բանն եթէ
առաջին անգամ բժշկութիւն չպատճառեց
նմա, գէթ բաւական զբօսանք էր նորա
թախծեալ մտաց :

Քարվէզ հանումը վերադարձաւ բայց
այս անգամ տարբեր եռանդով, իւր ձեռքը
բռնած էր ուռի մանր ճիւղերէ հիւսուած
փոքրիկ կողով մ'որոյ մէջ ծրարուած էին
կանեփի բանի մը թելեր, սեւ, կարմիր եւ
կանանչ մետաքս, քանի մը տեսակ ծխ-
իւրներ, պղնձէ թաս մը, մի ածելի եւ քա-
նոնի ձեռով քառակուսի թզաչափ փայտ
մը : ասոնք Քարվէզ հանումի վճուկեան
արհեստի գործիքներն էին, ու ասոնցմով կը
մտածէր թուղթ Սիսակի ցաւն :

(Շարունակ է)

Ղ. Պ. ՆԱՀԱՊԵՏԵԱՆ

Ք Ա Ղ Ո Ւ Ա Փ

Շ Ա Յ Ա Ք Ա Կ Ա Ն Լ Ր Ո Յ

Սեպտ. 5 էՆ 11

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

Բ. Դուռը նոր ծանուցագիր մը զրկեց
Բեդրասդուրկի դահլիճին, ի մասին պուլկա-
րական գործոց : Էհնթօթ ռուս զօրավարը
Պուլկարիա զրկելու մտօք Ռուսիոյ նախա-
պէս ըրած առաջարկն ընդունուած չէ եւ
օսմ. կառավարութիւնը կը բանակցի այժմ
պուլկարական խնդրոյն կարգադրման նոր
եղանակ մը գտնելու համար :

—Ֆէրտինանտ իշխանը մտերմական ձեռ-
նարկներ ըրեր է Ռուսիայի եւ Սերպիոյ
մօտ, ինքզինք ճանչցունել տալու համար տ-
նոնց, իբր իշխան Պուլկարիոյ, բայց չէ յա-
ջողեր :

—Զօրավար Պուլկարիա բանախօսութիւն
մ'ըրաւ ի Գլխումն-Ֆէռան իւր զօրաց առ-
ջեւ եւ ակնարկելով Բարիդի կոմսին վեր-
ջին յայտարարութեան, ըսաւ թէ «զն-
ընկեցութեան ժամն հիշած չէ, թէ յիմա-
րութիւն է հաւատալ այդմ եւ ոճիր մ'է
ըսել զայդ, որովհետեւ դա կարծել պիտի
տայ թէ Ֆրանսա խաղաղութեան կը բաղ-
ձայ ամեն պարագայի մէջ :

Յատնի է թէ Բարիդի կոմսն, Ֆրան-
սայի արքայական գերդաստանի այժմեան
պետն, յիշեալ յայտարարութեամբ՝ Հան-
րապետութեան պատճառած ներքին եւ
արտաքին չարիքները թուելով, կը խոս-
տանար ազատական թագաւորութիւն
մը, սահմանադրական եւ խորհրդարանա-
կան դրութեամբ : Եւ որպէս զի օտար
Տէրութիւնը չկարծեն թէ Օրլէանեանց վե-
րահաստատումը պատերազմ կը նշանակէ,
Բարիդի կոմսը կը յարէր թէ Ֆրանսայի ար-
քայական կառավարութիւնը կարող պիտի
լինի Տէրութեանց հետ բանակցիլ՝ այժմեան
սպառազինութեանց միահաղոյն զեղչման
համար, քանի որ ասոնք կը կործանեն Եւ-
րոպան յոգուտ այլ մասանց երկրագնդին :

—Անգլիոյ թագուհին իւր պարագայ
ժամերն յատկացուցած է Հնդկաստանի հին-
տուստանի կոչուած գաւառաբարբառն
հիմնովին սովորելու :

—Միացեալ Նահանգներն այս օրերս կը
տօնեն Ամերիկեան Սահմանադրութեան ի
Ֆիլատելֆիա հաստատման հարիւրամեակն :
Այս առթիւ ի Ֆիլատելֆիա կը կազմակեր-

պեն սքանչելի թափօրներ եւ ցուցահան-
դէսք, պատկերացնող Ամերիկայի 100 տարի
առաջուան վիճակն այժմեան վիճակին դէմ :

—Միջերկրականի անդլ. նաւատորմն, ընդ
հրամանօք Էտիպլըրկի Դքսին, որում կ'ըն-
կերանայ Կալէսի իշխանին ձորձ որդին,
այս օրերս այցեց Դրիէսդ, եւ մեծ պատ-
ուով ընդունուեցաւ թ'է քաղաքին բնակ-
չաց եւ թէաւստրիական Կառավարութեան
կողմէ :

—Պիզմարը իշխանին երէց որդին, Հէր-
պէրդ Կոմսն, ի մօտոյ պիտի վերստանձնէ
Գերմանիոյ արտաքին գործոց նախարարու-
թիւնը, զոր նմա կը թողու իւր հայր :

—Տըպլինի լրագրիք կը ծանուցանեն թէ
զգուշութեան արտասովոր միջոցներ ձեռք
առնուած են ի պահպանութիւն Իռլան-
տայի Փոխարքային, զոր կը վարչուի թէ
սպաննելու փորձ փորձեն ծայրայեղ Իռ-
լանտացիք :

—Մոսկուէ վեհաժողովը պահանջէ որ
Ռուսիա մասնակցի Սիւէդի ջրանցին չէզո-
քացման վերաբերեալ անգլո-Ֆրանսական
բանակցութեանց, եւ կ'ըսէ թէ Ռուսիոյ
ընթացքը մեծապէս ոյժ պիտի տայ Ֆրան-
սայի եգիպտական բաղաբախնութեան
ընդդէմ անգլիական բաղաբախնութեան :

—Վերջին Սուրհանդակաւ ստացանք Սին-
կարուրի Սթէյք-Թայմ լրագրոյն յուլիս 8-ի
թիւն, որ կը ծանուցանէ թէ Վերջորիւ
Թագուհւոյն Յորեկեանին առթիւ, տեղւոյն
Հայ գաղթականութեան Ս. Լուսաւորի
եկեղեցւոյն մէջ գոհարանական յատուկ
պաշտօն կատարուած է ի ձեռն Արժ. Մ. Ս.
Գրիգոր բահանային, եւ բոլոր հայ դադ-
թականք ներկայ գտնուած են «ի մէջ հո-
գեւոր պաշտաման, բահանայն ընտրեալ
պատշաճաւոր բարոյ մը խօսեցաւ իրենց Ի-
մաստուն եւ առաքինադարձ թագուհւոյն
կատարած ծանր եւ բազմադիմի պարտա-
կանութեանց վրայ : Համառօտիւ յիշեց Ն.
Վեհափառութեան մեծ Տէրութեան ամեն
կողմը բնակեալ հպատակաց երջանիկ եւ
զարգացեալ վիճակն, իբրեւ անյեղի պա-
ցոյց թագուհւոյն իմաստուն եւ արդարա-
սէր կառավարութեան Ի վերջոյ, հրախրեց
զներկայս իրեն հետ միանալով աղօթել որ-
պէս զի Ն. Վեհափառութիւն երկար եւ
բարեկեցիկ կեանք մը ունենայ եւ երկրա-
յին ու երկնային ամենայն օրհնութեամբ
լցուի :

Ն Ե Ր Ք Ի Ն

Երկուշաբթի օրն Իսլամաց տարեգլուխ
այսինքն 1 Մուհարրէմ 1305 լինելով, բո-
լոր նախարարք եւ կրօնային, քաղաքային ու
զինուորական բարձրաստիճան պաշտօնեայք
կայս. պալատ գնացին ի շնորհաւորութիւն
եւ ընդունուեցան Ս. Սեներկայետ Օսման
պէյի կողմէ որ ի դիմաց Վեհ. Սուլթանին
մեծարեց զանոնք եւ Մուհարրէմիյէ կոչ-
ուած դրամական նուէրներ բաշխեց : Օս-
ման պէյ ի մասնաւորի նախարարաց հա-
ղորդեց Վեհ. Սուլթանի հետեւեալ Իրա-
տէն :

«Նոր տարւոյ առթիւ եղած շնորհաւո-
րութիւններէն գոհ եղայ. Բարձրեալն Աստ-
ուած նոր տարին բարեբաւոյն ընծայէ
«Մեր Տէրութեան, Մեր նախարարաց ու
բոլոր պաշտօնէից եւ Մեր Տէրութիւնն
«ամենայն յաջողութեամբ բազում տարիներ
«բու հասցնելով, զամենեւին արժանի ընէ
«այսպիսի շնորհաւորութեանց : » Դեսպա-

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն

նախնայ առաջին թարգմանը եւս նոյն օրը կայս. պալատ գնացին եւ ընդունուեցան արարողապետ Միւսիւր փաշայի կողմէ:

Յունաց Պատրիարքն յատուկ գըրութեամբ մը յայտնած էր իւր շնորհաւորութիւններն ի կայս. պալատ. մեր Պատրիարքարանին կողմէ գործակատար Արարահամ էֆէնտին զրկուած էր, իսկ Հայ Հոռմէականաց Պատրիարքն անձամբ գնացած էր ի շնորհաւորութիւն:

—Օտմ. կայս. Պանքան՝ կայս. կառավարութեան հետ կատարուած բանակցութիւններէն յետոյ, իւր Բարիդի ու Լոնտոնի վարչութիւններէն ստացած հրահանգաց վրայ, վերսկսաւ վճարել օտար երկիրներու օտմ. գետնաւատանց ամսականները զորս դադարեցուցած էր:

—Օտմ. Պանքայի տնօրէն Պ. Տըփօ երեք շաբթի օրը Բարիդ ուղեւորեցաւ իւր որդին վարժարան դնելու:

—Եղիպտոսի նախարարապետ Նուպար փաշա ամսոյս 13|25ին Անգլիայէն Գահիրէ կը վերադառնայ:

—Ակնայ գայմազամ անուանեցաւ երբեմն Չարչամպայի գայմազամ Ահմէտ Բէյի տղայ:

—Տանլիմարքայի թագաւորը Տանլիմարքայի անուան զաւակներն ընծայեց Արտաքին գործոր նախարար Սալիտ փաշայի եւ Գերմանիոյ կայսրը Կարլը Արքայի պատուանշանը նուիրեց օտմ. մարտային վերատեսչութեան խորհրդական Պէրդրամ էֆէնտի:

—Փասթամունիի հայ բողոքական հասարակութիւնը գանգատագիր մ'ուղղած է առ ներքին գործոց նախարարութիւնն՝ գաւառին կուսակալին դէմ՝ որ կ'սպառնայ եղբոր անձնին արտաքսել զիւրեք, եթէ չարուստին բողոքականութիւնը քարոզել:

(Մանրէութեան)

—Եղեռնադատ ատենանը Տիարպէրքի Սըտգը էֆէնտիի ծանուցեալ դատին առթիւ իւր վճիռն արձակեց միաձայնութեամբ: Ամբաստանեալներէն Ճէմիլ Փաշա Քատէ Գասըմ պէյ, որ ծանուցեալ դէպքը պատահած ատեն՝ 13 տարեկան լինիլը պաշտօնապէս հաստատուած է, իւր կրեւիք պատժոյն մէկ երրորդին այսինքն երեք տարւոյ տեղ մէկ տարուան բանտարկութեան դատապարտուեցաւ, եւ նկատելով որ արքէն իւր բանտարկուած օրէն հաշուելով այլ պայմանաժամն աւարտած է, ազատ արձակուեցաւ: Միւս ամբաստանեալը, Նազիֆ եւ Ֆուատ պէյերն, Գապա Պըյըք Ահմէտ, Գաֆօ Հիւսէյին եւ ձիադարման Ալի եւս պատժական օրինաց 198րդ յօդուածի տրամադրութեան համաձայն երեքական տարւոյ շրջապակաւ աշխատութեան դատապարտուեցան:

—Զեքէաթ կ'իմանայ թէ, կայս. հրամանաւ, ծովային սպայներէ բաղկացեալ յանձնախումբ մը ի մօտոյ Վան պիտի երթայ լինելու համար Վանայ ծովուն մէկ քանի անոններ, ինչպէս եւ ընդհանուր ծովուն խումբիւնն եւ նաւարկութեան համար ո'ր անոններ յարմարութիւն ունենալը:

—Ելմտական նախարարութիւնը ծանոցեալ որ անկէ թէ Շէրիի բաղադրային եւ զատական դատարանաց վճառորոց մինչեւ թուականը չի գանձուած ծախքերու խախտման պէտք է ընդունել Քասթիլի արքային, որը առանց այլուր տրուելու պիտի զրկուին:

Ազգ. Ժողովն ի նիստ գումարուելով այս հինգշաբթի առաւօտ ի Ղալաթիա, Բաղադական Ժողովոյ ընտրութեան ձեռնարկեց, Ատենապետաց Գիւնին կողմէ ներկայացեալ երկպառակ ջանքին վրայ քուէարկութեամբ, սակայն ընտրեցաւ ո'չ մին օտանալով 24 քուէ, քուէարկութիւնը չեղեալ նկատուեցաւ եւ որոշուեցաւ 8 օրէն վերստին գումարիլ:

Քուէարկուեց թիւն էր 28, որոց 4ն ըստ պիտակ քուէ տուած էին:

—Ազգ. Վաչուցութեան որոշումը, 25-թուին հրկիզեալ եկեղեցեաց եւ ազգային հաստատութեանց վերաշինութեան հոգ տանելու համար կարգեալ յանձնաժողովն իւր զիւանը կազմած է հետեւեալ կերպիւ.

1. Կիւլպէնկեան Պատրիկ էֆ. Ատենպետ.
2. Մանուկեան Մկրտիչ » Ատենպետ.
3. Սարգիսի Գառնիկ » Գանձապետ.
4. Թօփալեան Գէորգ » Համարիլ.
5. Բարաղամեան Տիգրան » Անգամ.
6. Յովակիմեան Միհրան » »

—Եղեռնայ առաջնորդ Միսիթարեան Գեր. Խորէն եպիսկոպոս որ իբր այցելու հովիւ Տիգրանակերտ կը գտնուի, հրաման խնդրած էր իւր վիճակը վերադառնալ, Ամեն. Ս. Պատրիարք Հայրն հեռագրաւ ծանոց Ն. Գերապատուութեան որ յետագէ իւր մեկնումը ցժամանակն նորընտիր առաջնորդին Տիգրանակերտի:

—Իզմիրէն կը գրեն առ Արեւել.

«Շահապալեան վարդապետ տակաւին կը մնայ ի Մանիսա. կ'ըսուի թէ տեղւոյն Թաղական Խորհուրդը թագրի մը գրեւ է տեղական կառավարութեան, յայտնելու համար որ եթէ Շահապալեան հեռանայ, մեծ անկարգութիւնք պիտի պատահին: Այս լուր հաւատարի չթուիր, բայց անուրանալի է որ թէ՛ աստ եւ թէ՛ ի Մանիսա ամեն ջանք ի գործ կը շրջուին անոր երթն արգելելու համար:

«Վսեմ. Յովհաննէս էֆ. Սպարթալեան անցեալ չաքթու փառաւոր հաջկերոյթ մը տուաւ ի պատիւ նահանգիս Վսեմ. կուսակալին, իւր հոյակերտ ամարանոցին մէջ ի Պուճա. սեղանին ներկայ գտնուեցան նաեւ քառասուն հրաւիրեալներ, բոլորն ալ կառավարական պաշտօնեայք եւ բարձրակարգ անձնաւորութիւնք:

—Կրօնական Ժողովն իւր վերջին նստին մէջ նկատողութեան առաւ Տիգրանակերտէ եկած հեռագիր մը որ կը ծանուցանէր թէ վիճակին առաջնորդ ընտրուած է Պատրիարքական Փոխանորդ Գեր. Գէորգ Ծ. վարդապետ իւթիւճեան եւ ընդունեց զայս ընտրութիւն, պայմանաւ որ երբ Բաղ. Ժողով գումարի անոր եւս ներկայացուի այն Ժողովն որոշեց եպիսկոպոսական վկայագիր տալ Ն. Գերապատուութեան եւ հեռագրել ի Տիգրանակերտ որպէս զի ընտրութեան տեղեկագիրն եւ առաջնորդի ծախքը փութացնեն:

—Պ. Ռափայէլ Պատկանեան ողջամբ հասեր է ի Նոր Նախիջեան եւ այժմ կ'ըզբաղի ի զիր առնուլ այն սիրագործով տպաւորութիւնները զորս իւր հետ տարած է Կ. Պոլսէն:

—Վանայ պատրիարքական փոխանորդ Գեր. Գրիգորիս եպիսկոպոս յայտնած լինելով որ վիճակը խաղաղած է եւ կուսակցութիւնք բարձուած, Կրօն. Ժողովն որոշեց հեռագրել Ն. Գերապատուութեան որ:

պէս զի գաւառին Ընդհ. Ժողովը կազմէ եւ տեղեկագրէ:

—Մայրաքաղաքս հասած հեռագիր մը կը ծանուցանէ թէ Գեր. Մաղաքիա եպիսկոպոս Օրմանեան անցեալ հինգշաբթի էջմիածին ժամաներ է:

—Յաւօք կը ծանուցանենք թէ Քէօթա-հիոյ առաջնորդ Գերմակեան Գեր. Գէորգ եպիսկոպոս որ իւր հիւանդութիւնը դարմանելու համար մայրաքաղաքս եկած էր, ի Տէր հանգեաւ իւր եղբոր տունն, ի Սալմա թօմարը, ուր փոխադրուած էր Բերայի բրուսիական հիւանդանոցէն, հիւանդութեան ծանրանալուն պատճառաւ Յաւօքաւորութեան եւ օժման հանգէսը կատարուեցաւ յեկեղեցւոյ Պալատու:

—Հայրենիք օրաթերթը չկարենալով այլ եւս շարունակել իւր հրատարակութիւնը, շաբաթաթերթի վերածուած է: Յաւալի է որ 18 տարիէ ի վեր հրատարակուող ազգային լրագիր մը կը դադրի այսպէս եւ ջերմապէս կը փափագինք որ միջոյ մը գտնուի նորա կրկին հրատարակման:

—Վենետիկի Միսիթարեան միաբանութեան Աբբահայր Կիւրեղեան իգնատիոս Գերապայծառ երկու վարդապետաց ընկերակցութեամբ երկուշաբթի օրն Ազգ. Պատրիարքարան եկաւ յայցելութիւն Ամեն. Ս. Պատրիարք Հօր որ արժանաւայել մեծարանօք ընդունեց զնա: Ս. Պատրիարք Հօրն եւ Գեր. Աբբահայրը կէս ժամու չափ տեսակցեցան:

—Գարոցասէր Տիկնանց ընկերութեան բարեկամներ ցաւելով կ'իմացունեն մեղ թէ Վսեմ. Տիկին Սրբուհի Տիւսաբ փաշա անձնական հոգերու եւ տկարութեան պատճառաւ հարկադրուեց է հրաժարիլ ընկերութեան ատենապետութեան պաշտօնէն զոր կը վարէր այնքան փայլուն եւ արդիւնաւոր կերպիւ:

—Մշոյ վիճակին եւ Ս. Կարապետի վանուց միացման ինչ հիման վրայ կատարուած լինիլը կոնդակաւ մը հաղորդուեցաւ Սրբանձտեանց Գեր. Գարեգին եպիսկոպոսին:

—Կեսարիոյ առաջնորդ Արծ. Տրդատ վարդապետի պաշտօնը վաւերացնող կայս. Պէրաթն Ազգ. Պատրիարքարանին յանձնուեցաւ:

—Անցեալ շաբթու Իզմիր ուղեւորեցաւ Վսեմ. Մաքսուտ Սեպուհ էֆէնտի որ երկու ամսոյ չափ անդ պիտի մնայ անձնական գործոց պատճառաւ:

“ԱՐԵԳԱԿ”
ՇԱՐԱԹԱԹԵՐԹ ԱՅԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՆԱՔԱԿԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամերիկայի համար տարեկան	2 1/2 տուար
» վեցամսեայ	1 1/2 »
Եւրոպիոյ » տարեկան	12 ֆրնք.
» » վեցամսեայ	7 »
Թուրքիոյ » տարեկան	2 1/2 մէճիտ
» » վեցամսեայ	1 1/2 »
Դուրս զրկուած լրագրաց ճամբու ծախքը խմբագրութեան վրայ է:	

ԱՐԵԳԱԿ, Միացեալ Նահանգաց անդրանիկ Հայ լրագիրը, պիտի հրատարակուի քանի մ'ամիսէ վերջ, Նիւ-Եորքի մօտերն, առ այժմ շաբաթը մի անգամ: Հրատարա-

Guerlain de Paris.

15, Rue de la Paix.

ՀԱՍՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԿԸ ՅԱՆՁՆԱՐԱՐԵՆՔ ՀԵՏԵԻԵՍԻ, ՀՈՏԱԻՏ ՆԻԹԵՐԸ Eau de Cologne
Impériale. Sapoceti, օճառ արդուզարդի համար. Ambrosial cream, օճառուտ քաշի
հող մարդու համար. Crème de Fraises մորթի քակուղիներու համար. Poudre de Cypres
զովացնելու եւ ճերմկեցնելու համար մորթի. Stilboideֆայլ արու համար մազերուն եւ մորու-
քին. Eau Athénienne et Eau lustrale հոտ խնկելու եւ մաքրելու համար գլուխը. Alcoolat
de Cochlearia աղաւանդի համար. Eau de Chypre արդուզարդի համար. թաշկինակի հա-
մար հոտաւէտ իւրեքեր՝ Héliotrape, Pao Rosa, Shore's caprice, Maréchale Duchesse, Ma-
rie Christine. 977 12-26

կուրթեան բուն թուականը պիտի ծանու-
ցանե՞նք երկրորդ զեկոյցով :

ԱՐԵԳԱԿ նպատակ ունի Ամերիկեան Հայ
գաղթականութեան ու մայր հայրենիքի մէջ
ազգային կոպ մը լինիլ :

ԱՐԵԳԱԿ պիտի պարունակէ Գրական,
Ուսումնական, Արհեստական եւ այլ պիտա-
նի յօդուածներ : Եթէ յուսացեալ քաջալե-
րութիւնը չի զլանայ Ազգը, մտադիր ենք
երբեմն օգտակար մեքենաներու պատկեր-
ներ դնել :

ԱՐԵԳԱԿ իբր թերթօն պիտի հրատա-
րակէ ազգային նշանաւոր գործիչներու, ե-
կեղեցականաց, խմբագրապետաց, գորավա-
րաց ու հեղինակաց կենսագրութիւնը, շա-
տերու պատկերները դնելով : Նմանապէս
մէն մի տարւոյ մէջ ազգային կեանքի վը-
րայ գրուած լաւագոյն վիպասանութեան
հեղինակի պատկերը պիտի ջանանք տալ :

ԱՐԵԳԱԿ բնաւ պաշտօն չունի այսինչ
կամ այնինչ կառավարութեան, մասնաւորա-
պէս Թուրքիոյ եւ Ռուսիոյ ընթացքը քըն-
նադատել : Սա պատուաւոր խոստում մ'է :
Քանի որ Արեգակի նպատակն է օգտակար
լինիլ Հայութեան, հետեւաբար պարտի ըզ-
գուշաւոր լեզու մ'ունենալ միշտ :

Ամերիկայի մէջ Հայ լրագիր մը հրատա-
րակելու անթիւ դժուարութիւններն աչքի
առնելու ունենալով, Հայ հասարակութիւնն
ինքնին կրնայ մտածել թէ խմբագրութիւնն
որչա՞մ պէտք ունի Ազգին քաջալերին ու
օգնութեան :

Ընթերցասէր ու ազգասէր Հայ հասա-
րակութեան վրայ յոյս դնելով է որ կը
յանգգնինք մեր կարողութենէ վեր գործի
մը ձեռնարկել :

Կոչում ընելով այս առթիւ ազգի յա-
ռաջադիմութեան ու Ամերիկայի Հայ գաղ-
թականութեան պահպանման փափաքող
ազգասիրաց զգացման, կ'ակնկալենք այժ-
մէն ունենալ մեզ բաժանորդիլ փափաքող
անձանց անուններն ու հասցէներն, որպէս
զի ըստ այնմ կարողանանք կարգադրու-
թիւններ ընել :

Աւելի մանրամասն տեղեկութիւններ
թողլով ուրիշ անգամի մը, մնամ ակնդէտ
Տէր-Խմբագիր Հ. Էկիւնեան

Յ. Գ. Մեզ ուղղեալ ո՞ր եւ է նամակ
կամ ծրար զրկուելու է առ

H. Eguinian
95, P. O. Box West Hoboken N. J.
U. S. America

ՕՐԱՅՈՅՑ

1888

ԹՈՒԱԿԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՍ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ս. ՓՐԿՁԵԱՆ Ա.ՁԳ. ՀԻԻԱՆԴԱՆՈՅԻ

Գին 40 փարա

Մասնաւոր վաճառատեղին է գրա-
վաճառ Յովսէփ Էֆ. Գալաթեանի գը-
րատունը, Կ. Պոլիս, Չարմաքըճլար-Եօ-
քըճու, թիւ 20 :

Հիւանդանոցի Հոգաբարձութեան
կնիքը չկրող օրինակներն անվաւեր են :
1071 8-10

ԱՌԱՋՆՈՐԴ

ԹԱՐԳԱՆՈՒԹԵԱՆ ԳԱՂԻԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ
Խ. ՍԻՄՕՆԵԱՆ

Վաւերացեալ յՈՒՍՏԱՆԻՆ Խմբագր. Ազգ. Վարչ.

Այս դասագիրքն իւր դիւրութեամբ մէ-
թոտին եւ ընթեռնի հատուածոց ընտրու-
թեան կողմանէ ընդհանուր հաւանութեան
արժանացած եւ մուտ գտած է մայրաքա-
ղաքիս եւ գաւառաց գրեթէ բոլոր դպրո-
ցաց մէջ : Ըստ վկայութեան գաղղ. լեզուի
ձեռնհաս ուսուցչաց՝ անհրաժեշտ դասա-
գիրքն է առ մեզ գաղղիերէնէ ի հայ

լեզու թարգմանութեան վարժութեան հա-
մար եւ ընտիր առաջնորդ մ'է նորավարժ
հայ մանկան գաղղիերէն լեզուի նախնական
տարերց դիւրութեամբ ընտելանալու : Կեղ-
րոնատեղին է Պիպէռճեան գրատունն ի Յա-
կոբեան խան. կը գտնուի եւ այլ գրավա-
ճառաց քով :

Գինն է 3 դահեկան

1120

5-12

Վաւեր. Սրտօնատեան
Տնօրէն-Պատուոյստեան
Ի. ՏԱՄՍԵՆԱՆ

ՏՊԱԳՐ. ԱՐԵՒԵԼՔ ԵՒ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐԱՅ

ՄԼՏԵՄ Ս. Ա. ԱԼԼԵՆԻՆ

ԵՇԻՄԵՐԷՆՈՒՆՈՒ ՄԼՏ. ՆՈՐՈՒՊՐ

(MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTORER)



Ճերմակ ընկած մազերուն գոյն, վերնիճ ու գեղ
կուտայ : Կը նորոգէ անոր կեանքը, դժբ. եւ աճումը :
Գլխու թեփը շուտ մը անկուղի իջնէ : Իր անուշ
հոտը առատ է ու հեշտալի :

“Մէկ շնչ կը բաւէ :” Եւ փորձը ունեցան
ամենքը որոնցմիտքաւ ընած մազերը իրենց բնական գոյ-
նին դարձան, եւ ճաղատ տեղերը մազով ծածկուեցան :
Ինչ որ կուզես թարմ մազ ունենալ եւ բոլոր
կենացդ մէջ պահել, առանց ուշանալու շիշ մը ստացիր պիպէ Ս. Ա. ԱԼԼԵՆԻՆ Զաւա-
խաւան խալէ Նորօգնէն. (MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTORER.)

Գլխաւոր միջերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row).
Նոյնպէս Բարիզ ու Նիու Եօք : Կը վաճառուի ամեն սափրիչներու, անոյշ իւղա-
գործներու եւ անգղիացի դեղագործներու քով :

Կը գտնուի Ն. եւ Ժ. Գանգիւր Էդարց բրիտանական դեղարանը, Բերա, Մեծ
փողոց. Էտմընտ Գարուան. Անգլիական միջերանոց, Նիւքսէր Գալաթըմ. եւ Իզի-
տոր Լագանտէլլա 435, Բերա Մեծ փողոց :

ՀԱՄԱՆԵԿԸՆ ԾԱՂԱԿՆՔՈՒՆՑ.

ԳԵՂԵՑԿԱՆՈՒՆՈՂ ՄԼՏՄՆՈՅ ԳՈՅՆԸ, ՄԼՏՏ
ԾԱՂԱԿՆՔՈՒԹ. ՄԼՏՏ ԹԱՐՄ :



Ընդամուսն մը փորձը պիտի համոզէ ամեն Տիկին թէ որչափ
գերազանց է այս ուրիշ ամեն հեղանիւթներէ եւ բաղամիջի փոշի-
ներէ : Ըստ ին անգամ գործածելովն ալ, որ քանի
մը վայրկեանի գործ է, պիտի տեսնուի խկոյն որ
երեսը, վիզը, թեւերը եւ ձեռքերը պիտի առ-
նուն անոյշ փափկութիւն մը եւ մարմարինի
փայլ, հանդերձ շուշանի եւ վարդի գունով եւ
բուրմամբ : Սպասիր գրգռիչ յատկութիւնները

կը հանգարտեցունէ : Ընհետ կ'ընէ մորթի սեւեւը, երեսի եւ ձեռքի ցանքը, արեւայ-
րուքը, եւ ուրիշ ամեն բրտութիւն եւ բճաւորութիւն : Եւ այս ամեն բանով անկարելի
կ'ընէ մատնել թէ արհեստով գեղեցկացուած է :

Գլխաւոր միջերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). Նոյնպէս
Բարիզ ու Նիու Եօք : Կը վաճառուի սափրիչներու, անոյշ իւղագործներու եւ
անգղիացի դեղագործներու քով :

Կը գտնուի Ն. եւ Ժ. Գանգիւր Էդարց բրիտանական դեղարանը, Բերա, Մեծ
փողոց. Էտմընտ Գարուան. Անգլիական միջերանոց, Նիւքսէր Գալաթըմ. եւ Իզի-
տոր Լագանտէլլա 435, Բերա Մեծ փողոց :



ԿԵԱՆՔ, ԱՃՈՒՄՆ Ե ԳԵՂ ՄԱՋԵՐՈՒ :

ՄԼՏԼՐՈՑ

ՄԼՏԵՐՈՒ ՄԼՏԻ ՀԱՏԻԿ ՆՈՐՈՒՊԻՉ

Իրապէս իրենց առջի թարմ գոյնին կը դարձունէ ձերմըկած կամ գունաթափ
մազերը : Կը դարբեցունէ անոնց թափելը : Կը մաքրէ գլուխը, կը վերջացունէ
թեփը, ու մազերուն նոր կեանք, աճումն, փայլ ու գեղեցկութիւն կուտայ :
Կը վաճառուի երկու չափով մեծ շիշերու մէջ :

Գլխաւոր միջերանոցը Լոնտոն է (114 and 116, Southa pton Row). Նոյնպէս
Բարիզ ու Նիու Եօք :

Կը գտնուի Ն. եւ Ժ. Գանգիւր Էդարց բրիտանական դեղարանը, Բերա, Մեծ
փողոց. Էտմընտ Գարուան. Անգլիական միջերանոց, Նիւքսէր Գալաթըմ. եւ Իզի-
տոր Լագանտէլլա 435, Բերա Մեծ փողոց :